# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ղեկավարի 27.10.2017 թ. թիվ 35 , 06.11.2017 թ. թիվ 36-Ա, 37 որոշումները և համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 27.10.2017թ. թիվ 10 հրամանը:

Առդիր 4 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՌՈՒՌՈՒՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(060) 80-30-80

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» հոկտեմբերի 2017 թվականի N 35

### ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Համայնքային ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 11.09.2006թ. թիվ 15-Մ հրամանի պահանջներով 2017 թվականի նոյեմբերի 30-ին, ժամը $12^{00}$-ին անցկացնել Ջրաշենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Արտեմ Համբարձումի Հովհաննիսյանի (ծածկագիր 1.2-1), հերթական ատեստավորումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՌՈՒՌՈՒՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(060) 80-30-80

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2017 թվականի N 36-Ա

### ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թ. սեպտեմբերի 11-ի «Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը հաստատելու մասին» N 15-Ն հրամանի 9-րդ կետով՝

որոշում եմ.

2017թ. նոյեմբերի 30-ին ժամը 12.00-ին Ջրաշենի համայնքապետարանում անցկացվող Ջրաշենի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների ատեստավորման հանձնաժողովի տեխնիկական սպասարկում իրականացնելու համար լիազոր անձ նշանակել Ջրաշենի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ՝ Մարուշ Մկրտչյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(060) 80-30-80

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2017 թվականի N 37

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼՈՒՍԻԿ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լուսիկ Դավթյանի 2017 թվականի նոյեմբերի 03-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Ջրաշեն համայնքի 9Փ. 8 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Լուսիկ Դավթյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՋՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի հեռ. (060) 80-30-80
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

# ՀՐԱՄԱՆ N 10

## ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ, ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Համայնքային ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 11.09.2006թ. թիվ 15-Ս հրամանի պահանջներով 2017 թվականի նոյեմբերի 30-ին, ժամը $12^{00}$-ին անցկացնել Ջրաշենի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի՝ Սուրիկ Հաբեթի Մանուկյանի (ծածկագիր 2.3-2), առաջատար մասնագետի՝ Սամվել Վոլոդյայի Կարապետյանի (ծածկագիր 3.1-2), առաջին կարգի մասնագետների՝ Արմինե Հենրիկի Առաքելյանի (ծածկագիր 3.2-1) և Ռազմիկ Գառնիկի Զարգարյանի (ծածկագիր 3.2-4), հերթական ատեստավորումը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ